ՁԵՂՁՈՒՄԸ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միակազմ նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ կազմված են միայն մեկ գլխավոր անդամից, որը լինում է բայ կամ գոյական, կամ գոյական առում ստացած այլ խոսքի մաս: Դրանք էլ կամ ստորոգյալի, կամ ենթակայի դեր են կատարում: Այդ նախադասությունները ժողովրդի հազարամյակների լեզվամտածողության արդյունք են՝ պատկերավոր, խորիմաստ, հակիրճ, թևավոր ու դիպուկ, հաճախ՝ լեզվաոճային, հուզարտահայտչական հարուստ միջոցներով: Դարավոր մտածողությամբ ժողովուրդը այնպես է հղկել, համառոտել իր մտածողությունը, որ կարողացել է ստեղծել առանց ենթակայի կամ ստորոգյալի նախադասություններ: Հաճախ զեղչել է նաև բառակապակցություններ, այլևայլ մտքեր:

Խոսքի գեղեցիկ ու պատկերավոր դարձնելու հետ մեկտեղ նախադասության այլևայլ անդամների զեղչումը այն կարևորությունն ունի, որ ստեղծվում է տեղի ու ժամանակի, բառերի զգալի խնայողություն:

Միակազմ նախադասությունների կարևոր առանձնահատկությունը նաև այն է, որ դրանք այնպիսի կուռ ամբողջություն են կազմում, որ այլևս անհնար է որևէ փոփոխություն կատարել, այսինքն՝ ավելացնել կամ ենթակա, կամ ստորոգյալ: Այդպիսի փորձ անելու դեպքում իսկույն խախտվում է նախադասությունների էությունը, կորչում են ժողովրդական լեզվամտածողությունը, պատկերավորությունը, և նախադասությունը զրկվում է իր հիմնական էությունից՝ միակազմ ու շարահյուսական ինքնուրույն ու անկախ միավոր լինելուց և դառնում է երկկազմ նախադասություն:

Միակազմ նախադասությունների վերաբերյալ՝ արժեքավոր ուսումնասիրություն են կատարել Գ. Ջահուկյանը[1], Ս. Աբրահամյանը[2], Վ.Առաքելյանը[3], Ռ.Իշխանյանը[4]: Նրանք ուսումնասիրել, բնութագրել են այդ նախադասությունների կառուցվածքային, իմաստային առանձնահատկությունները և կիրա-

---

[1] Գ.Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, ԳԱ, 1974, էջ 371-379, 394-396:
[2] Ս. Աբրահամյան, ժամանակակից հայերենի քերականություն, «Լույս» 1969,էջ 330-354:
[3] Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. 2, էջ 58-79:
[4] Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Պետհամալսարան, 1986:

ռական նշանակությունները: Ս.Գյուլբուդաղյանը[5] միակազմ նախադասությունների ուսումնասիրությանը նվիրել է առանձին աշխատություն: Հեղինակն ընդհանրապես հարցերի քննությունը կատարել է բավարար մակարդակով: Սակայն նույն սկզբունքով չի վերաբերվել բառ-նախադասություններին, դրանց մասին խոսել է շատ համառոտ:Այնինչ բառ-նախադասություններն ունեն տեսական ու գործնական մեծ նշանակություն և լայն կիրառություն:

Միակազմ նախադասություններն ըստ իրենց արտահայտած իմաստների մի քանի տեսակի են՝ բայական, անվանական, բառ-նախադասություն: Քննության առնենք դրանք առանձին-առանձին:

<u>Բայական նախադասությունները</u> ենթակա չունեն, քանի որ դրանց գործողությունը չի վերաբերում մեկ անձի կամ անձանց: Դրանք ժողովրդի դարավոր կենսափորձի, նրա մտածողության արտահայտություններն են, որոնք դարձրել են ընդհանրացումներ և զրկվել կոնկրետությունից: Այդ նախադասությունների կազմում են մեծ կշիռ ունեն անորոշ դիմավոր նախադասությունները, որոնք գերազանցապես արտահայտվում են հոգնակի երրորդ դեմքով: Օրինակներ՝ *Ասում են* մի օր ես օրորոցում մի պառավ դերվիշ մեր տունն է գալիս.../ Թեժ, III, 91/: *Ասում էին*, որ ես արդեն հարսնացու եմ, որ ինձ համար այս ու այն երիտասարդը առաջարկություն է անում, որ ես շատ գեղեցիկ եմ / Մուր., Երկեր, 306 /: *Քեզ հարցնում են՝ տա՞ն է, թե չէ* / Թ., Երկեր, I , 318 /: Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին /նույնը, 409 /: *Քաշում են տանից, քաշում են դռնից* /Թեժ, III, 73 /: Պսակեցին Մարոյին, տվին չոբան Կարոյին /Թ. Երկեր, I, 12 /: *Ասում են՝ Ուռին աղջիկ եր ինձ պես* / Թեժ, III, 88 /: *Հրեղեն ձի տրան կասե՞ն* /ԱԲԵ, I,1/: *Հարուստի հագին շոր տեսան, ասին՝ շնորհավոր, աղքատի հագին տեսան, ասին՝ որտեղի՞ց է* /առած/: Այդպիսի նախադասությունները ժամանակին ունեցել են ենթակա՝ <u>*մարդ*</u> բառով արտահայտված: Ներկայումս էլ <u>*մարդ*</u> բառը գործածվում է նույն ձևով, բայց առանց ենթակայի իմաստի, իսկ նախադասությունները դարձել են անորոշ դիմավոր: Օրինակներ՝ Վե՞ր կացեք, վե ՞ր, ամբողջ գիշեր մարդ է գնում ու գալի /Թեժ, II, 55/: *Մեր ապրուստն ի՞նչ է, մի կտոր չոր հաց , էն էլ հրեն հա՞, երկնքից կախված, մարդ , որ նրա երեսը պահի՝ նրա ապրուստն ի՞նչ պետք է լինի* .../Թեժ.III, 72 /:
Մարդ վուր ըլի նու ու այիբ, էրկու բեն /Սայաթ-Նովա, 66 ,1959 /: *Մարդ կա՝ ելել է*

---

[5] Ս. Գյուլբուդաղյան, միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:

շալակն աշխարհի, մարդ ել կա՝ աշխարհը շալակած է տանում /Պարույր Սեվակ/: *Մարդ* չի իմանում, թե վաղը ի՞նչ կգա իր գլխին /առած/: Բերված օրինակներից ոչ մեկում *մարդ* բառը ենթակայի դեր չի կատարում: Պարզ նկատելի է, որ այդ նախադասությունները նույնպես անորոշ դիմավոր, անենթակա նախադասություններ են :

Անորոշ դիմավոր նախադասությունների շարքն են դասվում այն նախադասությունները, որոնց ստորոգյալը դրվորմ է եզակի երկրորդ դեմքով և միաժամանակ արտահայտում է 1-ին և 3-րդ դեմքի իմաստ, որի համար էլ կոչվում են ընդհանրացնող դիմավոր: Այդ նախադասությունները առավելապես ժողովրդական լեզվամտածողության արտահայտություններ են՝ առակներ, ասացվածքներ, ինչպես՝ «*բան է, թե որ չտա սիրով, աչքը հանիր, խլիր զոռով* /Թեժ. II, 27/ : Ի՞նչ անես, ախպեր, ումի՞ց խռովես /Թեժ ,III,70 /: *Աչքդ թեքեցիր՝ բանիդ տերը չես* / Թեժ , III ,73 /: Ու չես իմանում՝ որ կողմը թռչես /նույն տեղում/: *Մի լինի ուրագի պես, միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, այլ եղիր սղոցի պես՝ մին դեպի քեզ, մին դեպի մեզ* /Թում., /: Ինչ որ անես, կգա դեմդ /առակ / և այլն :

Անդեմ նախադասություններում նույնպես գործող անձը կամ ենթական բացակայում է, նրա կարիքը չի զգացվում , առկա է միայն գործողությունը: Այս նախադասությունները հիմանականում արտահայտվում են եզակի 3-րդ դեմքով, որը, սակայն,դեմքի արժեք չունի, քանի որ հարբերության մեջ չի մտնում 1-ին ու 2-րդ դեմքի հետ : Օրինակ՝ *Մթնում է* 3-րդ դեմքի բայը չի կարող ունենալ 1-ն և 2-րդ դեմքերի՝ *մթնում եմ, մթնում ես* ձևերը: Բայական անդեմ նախադասությունների գերադաս անդամը անորոշ դերբայն է: Այդ նախադասություններն արտահայտում են բնության երևույթներ, կլիմայական, ժամանակային վիճակներ, բազմազան այլ հարաբերություններ: Օրինակներ՝ *Ամպել է, տուն չի գալիս, մթնել է, քուն չի գալիս* /երգ/ :Կամ՝ *Մթնեց, լուսացավ, ցրտեց, անձրևում է, ամպում է* և այլն: Անդեմ նախադասությունները կարող են կազմվել բառակապակցություններով, ինչպես՝ *կարկուտ է թափվում, շաղ է նստել, հուրհրատին է տալիս, արևին է տալիս, լույս է ընկնում* և այլն:

Մտքերի մեծ զեղչումներ են պարունակում անորոշ դերբայով արտահայտված անդեմ նախադասությունները, որոնք ցույց են տալիս գործողության կատարման պահանջ, հրաման, անհրաժեշտություն: Մեջբերենք Տերյանի «Մոռանալ» բանաստեղծությունից մի հատված:

Մոռանա՞լ, մոռանա՞լ ամեն ինչ,
Ամենքին մոռանա՞լ,

Ցսիրե՞լ, չխորհե՞լ, չափսոսա՞լ,
հեռանա՞լ...

Գ.Ջահուկյանը բայական այսպիսի նախադասությունները համարում է անվանականի մի տեսակ[6]: Իրականությունից և չար մարդկանցից դառնացել է բանաստեղծը, կյանքը նրա համար կորցրել է ուրախությունն ու հրապուրանքը: Նա իր տառապանքը, վիշտն ու դառնությունը արտահայտում է «Մոռանալ» բանաստեղծությամբ: Մանավանդ «Մոռանալ» բառի կրկնությամբ ավելի է ընգծում իր դժգոհությունը և հեռանալու ու մոռանալու անհրաժեշտությունը:

Միակազմ նախադասությունների մյուս տեսակը *անվանական նախադասություններն* են: Դրանց առանձնահատկությունն այն է, որ գլխավոր անդամը գոյական է, կամ գոյականի առում ստացած խոսքի մաս, կամ բառակապակցություն, որոնք դրվում են ուղղական հոլովով և անվանում են առարկան, նրա գոյությունը, ցույց են տալիս առարկայի տարբեր վիճակները. դրանց հատկանիշները: Արտահայտում են բնության երևույթներ, ժամանակ, ցուցականություն, կրկնություն, բացականչություն: Անվանական նախադասությունները կիրառվում են առանց բայական հանգույցի և չունեն քերականական ստորոգում: Դրանց ստորոգումը կատարվում է հնչերանգով ու դադարով, և մեկ բառն էլ նախադասություն է կազմում: Այսպես՝ *Օգոստոս: Շոգ: Փոշի: Քամի: Էջմիածին: Կտրտված ծառեր: 41 թվական: Պատերազմ* : *Վիշտ ու ավեր: Ջոհե՞ր, զոհե՞ր* :

Տերյանը բազմաթիվ բանաստեղծություններում անվանական նախադասություններով արտահայտում է իր մտորումներն ու խոհերը, տխրությունը,վիշտն ու թախիծը: *Մեզ, անձրև* ու *մշուշ* /«Աշուն»/ : *Սև գիշեր*, և՝ *հուշեր* , և՝ *խոհեր անհամար: Տրտմություն* մենավոր, միաձայն , միալար... *Գիշե՞ր, գիշե՞ր, լռությու՞ն* /ԿՏ , Երկեր, 108/ : Այդպիսի բառերն ու բառակապակցությունները գործածել է մեծաթիվ բանաստեղծություններում, որոնք բոլորն էլ ցույց են տալիս առարկաների գոյությունը, լինելությունը :

Անվանական նախադասությունները հաճախ ունենում են անվանական լրացումներ, ինչպես՝ *հնադարյան* բերդեր, բերդեր, քաղաքներ:

Անվանական նախադասությունները *ահա* բառի հետ արտահայտում են ցուցականություն: Ինչպես՝ Շուրջդ *ահա գիշեր* ու *երգ, հանգի՞ստ, հեքիա՞թ,*

---

[6] Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, ԳԱ, 1974:

ու *երա՜զ* /ԿՏ , Երկեր, 103 /: Գեղարվեստական գրականությունը չափազանց հարուստ է բացականչություն ցույց տվող անվանական նախադասություններով: Դրանք կազմվում են զգացական ու կամային ձայնարկություններով և արտահայտում են խոսողի ու խոսակցի զգացմունքը, կամքը, վրդովմունքը, վիշտն ու զայրույթը՝ մարդկային ու բնության այլևայլ պայմաններում:

- Ա՛յ դու *արյունռու՜շտ, պագշո՜տ սրիկա՛,*
Անխի՜ղճ, անօրե՜ն, անանու՜ն սրիկա՛...
- *Օ՜, վրեժ...* /Շեքս. , I , 47 / :

Զեղչված, համառոտված անվանական նախադասությունները ստեղծում են ոճի հաճելի սեղմություն, պատկերավորություն, արտահայտում են նաև առարկաների առատ, շատ լինելը: Օրինակ՝ Ողջ դաշտավայրը լիքը *զո՛րք, զո՛րք, զո՛րք: Զինվորնե՛ր, հայրե՛ր, եղբայրնե՛ր, որդինե՛ր:* Կտակներս մեր սուրբ հայրենիքին /ԴԴՎ., 945, 948 /:

Անվանական նախադասություններն ունեն մի այլ առանձնահատկություն ևս: Բացականչական հնչերանգով արտահայտված կրկնավորները ցույց են տալիս տագնապ, վախ, երկյուղ, վտանգ, օգնության կանչ, վրդովմունք, զայրույթ: *«-Էհե՜յ, օգնությու՜ն, հասե՜ք, օգնությու՜ն* ...» /Շեքս., I, 67/: Այլ օրինակներ՝ «Դավաճանությու՜ն, էհե՜յ, ծառանե՛ր, դավաճանությու՜ն» /նույնը, 110 /:

Ընդգծված անվանական նախադասություններում զեղչված են բայական հանգույցները:

Անվանական նախադասությունների մյուս տեսակները *բառ-նախադասություններն* են, որոնք կազմված են հիմականում կամ մեկ բառից, կամ բառակապակցությունից: Դրանք գործածվում են երկխոսություններում, հարց ու պատասխանի ժամանակ: Բառ-նախադասությունը բխում է նախորդ նախադասության բովանդակությունից և արտահայտում է հաստատում ու ժխտում, համաձայնություն ու անհամաձայնություն: Խոտակիցը խոսողի խոսքից իբրև պատասխան վերցնում է բնորոշ այնպիսի բառ կամ բառակապկցություն, որոնք հասկանալի են դարձնում բառ-նախադասությունն ամբողջությամբ: Մեծածավալ զեղչումները այդ նախադասությունների բնորոշ առանձնահատկությունն են: Եվ չնայած նախադասության համառոտությանը, ունենում են հնչերանգային ավարտվածություն: Հարց ու պատասխանը միմյանց լրացնելով՝ խոսքը բնութագրվում է լիարժեք, տիպականացվում է խոսողի և խոսակցի ոճը, որը դառնում է պատկերավոր, կտրուկ, երբեմն՝ հուզարտահայտչական:

Բառ-նախադասությունները լրացում չեն ունենում և նախադասության անդամ չեն դառնում:

Բառ-նախադասություն են կազմում հաստատական ու ժխտական եղանակավորող բառերը՝ *այո՛ , իհարկե, ինչ խոսք, ինչպես չէ, իսկապես, անպատճառ, անշուշտ, հարկավ, այն էլ ոնց, հա՛, ո՛չ, չէ՛, բնավ, երբեք, ամենևին*, որոշ ձայնարկություններ և այլ բառեր:

<u>Հաստատական բառ-նախադասություններում</u> խոսակիցն անմիջապես պատասխանում է խոսողի հարցերին կամ հաստատում, համաձայնվում է նրա տված հարցերին: Բերենք տարաբնույթ օրինակներ:

Այս թղթով դու հրաժարվու՞մ ես քո բաժին ժառանգությունից:

- Այո՛... /ՇԵԺ., III , 415/: Այս բառ- նախադասության մեջ զեղչված են ենթական, ստորոգյալը, միջոցի և անջատման անուղղակի խնդիրները, որոշիչը, հատկացուցիչը:

«- Դրանով դու կարծու՞մ ես՝ կվերջանա՞ Արշակունյաց թագավորությունը,- ձայն տվեց Թագուհին խորին վրդովմունքով:

- Այո՛, տիկին... /Ր., VII, 427 /»: Այս բառ-նախադասության մեջ զեղչված են ենթական, ստորոգյալները, ուղիղ խնդիրը, միջոցի անուղղակի խնդիրը, որոշիչը:

«Սպարապետը հարցրեց.

- Դու՞ ես պարսից արքայից արքայի դահճապետը:
- Այո՛, նվաստս է, տեր իմ.../ Ր., VII , 373/»: Զեղչված են *պարսից արքայից արքայի դահճապետ* բառերը :
- Դու կամենում էիր, որ մինչև Վեհի գալը բանալիները քեզ մո՞տ լինեին,- հարցրեց թագուհին բերդակալին:
- Այո՛, մեծափառ տիկին /ՄԳՄ , 16 /:

Երբեմն հաստատական բառ-նախադասությունները արտահայտվում են հարցական արտաբերությամբ, ինչպես նաև այլևայլ բառերով: Օրինակ՝ կարո՞ղ ես այդ նամակը ինձ մոտ թողնել :

- Ինչու՞ չէ /ՐԵԺ, VII. 132/ :
- Դու եկար նախատելու՞ քո հորը, Սամվե՛լ, -ձայն տվեց նա հոգեկան խորին տանջանքներից հետո:
- Ո՛չ, հայր /ՐԵԺ, VII, 509/ : Զեղչված են ենթական, ստորոգյալը, ուղիղ խնդիրը, նպատակի պարագան, հատկացուցիչը: